ՀՀ Լոռու մարզպետ

Արթուր Նալբանդյանին

Դիմող՝ Ժաննա Հովսեփի Մասարաջյան

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Երևանյան խճ., 68/16

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հայտնում եմ Ձեզ, որ ես՝ Ժաննա Մասարաջյանս, և Գագիկ Պապիկյանը, 2006թ. հրաժարվել ենք մեր որդու՝ Սամվել Գագիկի Պապիկյանի (ծնված 06.08.2008թ., ծննդյան վկայական ԱԱ N 115322, տրված ՔԿԱԳ Վանաձորի տարածքային բաժնի կողմից 07.08.2006թ.) հետագա խնամքից և դաստիարակությունից (անբուժելի հիվանդությամբ տառապելու պատճառով) և հանձնել ենք Սպիտակ քաղաքի երեխաների տուն (համաձայնագրի պատճենը ներկայացվում է կից):

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՝

1. Սամվել Գագիկի Պապիկյանին արդյո՞ք որդեգրել են, թե ոչ,
2. Եթե որդեգրել են, ապա ո՞վ (ովքե՞ր) է (են) որդեգրել (խնդրում եմ նշել որդեգրող անձանց անուն, ազգանունները),
3. Եթե Սամվել Գագիկի Պապիկյանին չեն որդեգրել, ապա որտե՞ղ է վերջինս գտնվում,
4. Արդյո՞ք Սամվել Գագիկի Պապիկյանին վիրահատել են, թե ոչ,
5. Արդյո՞ք Սամվել Գագիկի Պապիկյանի անուն, ազգանունը փոփոխվել է, թե ոչ:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կից ներկայացվում է՝

1. Ծննդյան վկայականի պատճենը,
2. Անձնագրիս պատճենը,
3. Համաձայնագրի պատճենը:

Դիմող՝ Ժաննա Մասարաջյան

14.02.2018թ.